

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝

1. <<է>> կետը <<կարգը>> բառից հետո լրացնել <<և պարբերականությունը>> բառերով,
2. <<թ>> կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 15-րդ հոդվածի

1. 2-րդ մասի 2-րդ պարբերությունը, 3-րդ և 7-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել,
2. 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<6. Տեխնիկական զննության արդյունքում զննություն իրականացրած լիցենզավորված անձը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ տիրապետողին տրամադրում է ՀՀ կառավարության կողմից սահմանված նմուշի արատորոշման քարտ, իսկ տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալները և տեխնիկական զննության արդյունքները առցանց եղանակով փոխանցում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության էլեկտրոնային շտեմարանին:>>:

**Հոդված 3.** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <<ժա>> կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ժա) տրանսպորտային միջոցն օրենքով սահմանված ժամկետում չի անցել տեխնիկական զննություն կամ տեխնիկական զննության արդյունքում ճանաչվել է անսարք:

**Հոդված 4.** Օրենքի 18<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի <<բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական զննության կամ հաշվառման կտրոնը գտնվում է վարորդի մոտ: Այդ դեպքում կտրոնը փակցվում է սահմանված տեղում, և թույլատրվում է տրանսպորտային միջոցի հետագա շահագործումը>> բառերը հանել:

**Հոդված 5.** Օրենքի 33<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի <<ժգ>> և 33<sup>2</sup> հոդվածի <<ե>> կետերը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 123<sup>4</sup>-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 123<sup>4</sup>. Սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված), տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելը, տրանսպորտային միջոցի նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը, առանց տեխնիկական զննություն անցկացնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին ճանաչելը կամ տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցի վերաբերյալ բոլոր տվյալները և տեխնիկական զննության արդյունքները առցանց չփոխանցելը կամ թերի փոխանցելը**

1. Օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված) տրանսպորտային միջոց վարելը, ինչպես նաև տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով:

3. Առանց տեխնիկական զննություն անցկացնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին ճանաչելը՝

առաջացնում է տուգանք՝ տեխնիկական զննության կայանի ղեկավարի նկատմամբ երեք հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործունեության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցի վերաբերյալ բոլոր տվյալները և տեխնիկական զննության արդյունքները առցանց չփոխանցելը կամ թերի փոխանցելը՝

առաջացնում է տուգանք՝ հարյուր հազար դրամի չափով՝ լիցենզիայի գործունեության կասեցմամբ կամ առանց դրա:

**Հոդված 2.** Օրենսգրքի 224 հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը 123.4 թվերից հետո լրացնել «(բացառությամբ երրորդ և չորրորդ մասերով նախատեսված իրավախախտումների)» բառերը:

**Հոդված 3.** Օրենսգրքի 227<sup>1</sup> հոդվածի վերնագրում և տեքստում «տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 244<sup>13</sup> հոդվածի 1-ին պարբերության «օրենսգրքի» բառից հետո լրացնել «123<sup>4</sup> հոդվածի երրորդ և չորրորդ մասերով» բառերը:

**Հոդված 5.** Օրենսգրքի 304 հոդվածի երրորդ պարբերության «123-131» թվերը փոխարինել «123-123.4 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.5-131» բառերով:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 28.1 կետը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 36.1 հոդվածի 1-ին մասի «տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՄ

**«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի**

## **1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ-ի ոլորտ» բաժնի 4-րդ կետի «Ավտոտրանսպորտի տեխնիկական զննման նոր կանոնակարգերի մշակման, տեխնիկական զննման կտրոնների փոխարինման էլեկտրոնային համակարգով և տեխնիկական զննման փաստացի իրականացման վերահսկողական մեխանիզմների ներդրման վերաբերյալ» «ե» ենթակետի պահանջով:

## **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝**

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են տեխնիկական զննության: ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված են տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն իրականացնելու լիցենզավորման կարգը, լիցենզիայի պայմաններն ու պահանջները, ներառյալ՝ տվյալ լիցենզիայի հիման վրա շահագործվող հոսքագծերի նվազագույն քանակը, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնելու կարգը, տեխնիկական արատորոշման միջոցների օգտագործմամբ տեխնիկական զննության ընթացքում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման աշխատանքներին ներկայացվող պահանջները, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման փաստաթղթին (կտրոնին) ներկայացվող պահանջները: Տեխնիկական զննության արդյունքում շահագործման պահանջներին համապատասխանող տրանսպորտային միջոցի համար զննություն իրականացրած լիցենզավորված անձը տրամադրում է սահմանած նմուշի կտրոն, որը պետք է փակցվի տրանսպորտային միջոցի վրա՝ վարորդի կողմից առջևի հողմապակու ներքևի աջ անկյունում, սակայն փաստ է, որ ներկայումս տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացումը կրում է ձևական բնույթ, քանի որ տեխնիկական զննության կտրոնը բանկերից ձեռք բերելուց հետո տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ տիրապետողը տրանսպորտային միջոցը չի ներկայացնում տեխնիկական զննության, այսինքն փաստացի չի ստուգվում

տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը, որն էլ իր հերթին որոշ դեպքերում բերում է տրանսպորտային միջոցի տեխնիկապես անսարք վիճակով շահագործմանը՝ սպառնալով ճանապարհային երթևեկության անվտանգությանը:

### **3. Կարգավորման նպատակը և բնույթը.**

Առկա խնդիրները կարգավորելու և տեխնիկական զննության գործընթացի նկատմամբ վերահսկողությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է տեխնիկական զննության կտրոնի տրամադրման պահանջը հանել: Վերահսկողությունը իրականացնել էլեկտրոնային շտեմարանի և արատորոշման քարտի միջոցով: Տեխնիկական զննության արատորոշման քարտը ներառում է անհրաժեշտ տեղեկատվությունը տրանսպորտային միջոցի, տեխնիկական զննության, ինչպես նաև կրկնակի տեխնիկական զննության անցնելու վայրի, օրվա, ժամի, տեխնիկապես սարքին ճանաչվելու կամ հայտանաբերված թերությունների վերաբերյալ: Ուստի դրա առկայությունը բավարար է տեխնիկական զննություն անցնելու կամ չանցնելու վերաբերյալ վերահսկողություն իրականացնելու համար:

Արատորոշման քարտը լրացվում է էլեկտրոնային եղանակով և պահպանվում էլեկտրոնային շտեմարանում, ինչը հնարավորություն է տալիս վերահսկողություն իրականացնել նաև էլեկտրոնային եղանակով, առանց տրանսպորտային միջոցը կանգնեցնելու: Միաժամանակ գործող էլեկտրոնային ծրագիրը թույլ է տալիս վերահսկել տեխնիկական զննության փաստացի իրականացումը: Այն արձանագրում է տրանսպորտային միջոցի արգելակային ստենդի վրա բարձրանալը՝ ֆիքսելով տվյալ տրանսպորտային միջոցի քաշը: Համապատասխան տողում <<0>> թվի առկայությունը փաստում է տեխնիկական զննության կարգի պահանջների չկատարումը կայանի կողմից:

### **5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Որոշման նախագիծը մշակել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչությունը:

### **6. Ակնկալվող արդյունքը.**

ա) բացառել տրանսպորտային միջոցների սեփականատերերի կամ տիրապետողների կողմից տեխնիկական զննության կտրոն ձեռք բերելու և առանց տեխնիկական զննության կայան ներկայանալու հողմապակուն փակցնելով տրանսպորտային միջոցների շահագործումը,

բ) վերահսկողություն իրականացնել ոչ թե կտրոնի առկայության կամ բացակայության, այլ տրանսպորտային միջոցի փաստացի տեխնիկական զննություն անցնելու կամ չանցնելու նկատմամբ՝ հիմք ընդունելով արատորոշման քարտի և էլեկտրոնային շտեմարանի տվյալները,

գ) բացի տրանսպորտային միջոցների սեփականատերերին կամ տիրապետողներին վարչական պատասխանատվության ենթարկելուց, սահմանել նաև վարչական պատասխանատվություն կայանների նկատմամբ տեխնիկական զննության գործընթացը սահմանված կարգով չիրականացնելու համար,

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի**

### **1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.**

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ փոփոխություններ կիրականացվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի № 344-Ն որոշմամբ հաստատված կարգում, ուժը կորցրած կճանաչվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի № 346-Ն, 2011 թվականի մարտի 31-ի № 350-Ն որոշումները, 1998 թվականի հուլիսի 24-ի № 461-Ն որոշման 2-րդ և 3-րդ կետերը:

### **2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.**

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի պահանջները միջազգային պայմանագրերին չի հակասում:

### **3. Այլ տեղեկություններ.**

Չկան

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի

### **1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.**

Նախագիծը տեղադրվել է համացանցում՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության [www.mtcit.am](http://www.mtcit.am) կայքում:

### **2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին.**

Նախագծի մշակման փուլում իրականացվել են քննարկումներ ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ



**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում  
 փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում  
 փոփոխություններ կատարելու մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ»  
 Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ  
 օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական  
 ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների  
 կամ նվազեցումների վերաբերյալ

<i>Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցություն</i>					
<b>Ցուցանիշներ</b>	<b>ընթացիկ (n-րդ) տարի</b>		<b>Հաջորդող 3 տարիները</b>		
			<b>n +1</b>	<b>n +2</b>	<b>n +3</b>
	<i>Ըստ n-րդ տարվա պետական բյուջեի</i>	<i>փոփոխու նը n-րդ տարվա պետական բյուջեի համեմատ</i>	<i>Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)</i>	<i>Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)</i>	<i>Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ</i>
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>
<i>1. Եկամուտներ</i>					
<i>1.1. պետական բյուջեի եկամուտներ</i>					
<i>1.2. ՏԻՄ եկամուտներ</i>					
<i>2. Ծախսեր</i>					
<i>2.1. պետական բյուջեի ծախսեր</i>					
<i>2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր</i>					
<i>3. Ֆիսկալ ազդեցության գնահատական</i>					
<i>3.1. պետական բյուջե</i>					
<i>3.3. ՏԻՄ բյուջե</i>					
<i>4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):</i>	<p>Օրենսդրական փաթեթի ընդունումը ՀՀ պետական բյուջեում կարող է առաջացնել հետևյալ փոփոխությունները.</p> <p>2015թ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 1,500.0 հազար դրամ՝ տեխնիկական գնության կտրոնների տպագրության համար, որի դիմաց ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 2015թ 11,005.0 հազար դրամ պետական տուրք: 2016թ 10 ամիսների տվյալներով ՀՀ պետական բյուջե մուտքագրված պետական տուրքի գումարը կազմել է 7,470 հազ դրամ:</p> <p>Օրենսդրական փաթեթի ընդունումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի եկամուտների նվազմանը շուրջ 9,500.0 հազար դրամի չափով:</p>				
<i>4.1. Եկամուտների գնահատում</i>					
<i>4.2. Ծախսերի գնահատում</i>					
<i>5. Այլ տեղեկություններ (եթե այդպիս առկա են)</i>					